

ԾՐԱԳԻՐ

«ՊԱՏՇԱՃ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, ԴԵՂԵՐԻ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ» ԹԵՄԱՑՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2023 թվականից կրկնողաբար, ք. Երևան (ՀՀ ԱՆ Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ, առցանց՝ «Զոււմ» հարթակ)

ՀՀ ԱՆ Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ

Օր 1	
2 ժամ	<p>Դասախոսություն</p> <p>Պատշաճ գործունեության տեսակները դեղագործական ոլորտում, գործընթացների ստանդարտ ընթացակարգեր</p> <ul style="list-style-type: none"> • ՊԱԳ, ՊԿԳ, ՊԲԳ, ՊՊԳ, ՊԼԳ բնութագիրը և ներկայացվող պահանջներ • ԳՄԸ-ների կառուցվածքը, պահանջները և տեսակները
1 ժամ	<p>Գործնական աշխատանք</p> <p>Թեմային առնչվող դեպքերի ներկայացում և քննարկում: Ինքնուրույն աշխատանք՝ իրավիճակային խնդիրների ներկայացում, քննարկում: Գործնական հարցերի և առաջադրանքների վերլուծություն</p>
Օր 2	
2 ժամ	<p>Դասախոսություն</p> <p>Պատշաճ բաշխման/պահպանման գործունեություն. Միջազգային ուղեցույցի բովանդակության և պահանջների վերլուծություն.</p> <ul style="list-style-type: none"> • ԱՀԿ-ի ուղեցույցի պատշաճ գործունեություն բովանդակության, մասնավորապես դեղարտադրանքի պատշաճ պահպանման գործունեության ներկայացվող հիմնական դրույթներն • Անձնակազմին, տարածքներին և տեղամասերին ներկայացվող պահանջների ապահովումը • Պահպանման պայմանների մոնիթորինգի պահանջները: Պիտակավորմանը և փաթեթավորմանը ներկայացվող պահանջները • Վերադարձվող ապրանքներին ներկայացվող պահանջներ • Պաշարների շրջապտույտը և դրա հսկումը • Առաքման և տեղափոխման ներկայացվող պահանջներ
1 ժամ	<p>Գործնական աշխատանք</p> <p>Թեմային առնչվող դեպքերի ներկայացում և քննարկում, մասնավորապես ուսումնասիրվում են պատշաճ գործունեությանը վերաբերվող դեղատանը և դեղապահեստներում պահպանվող դեղարտադրանքին առնչվող տարբեր գործընթացներ, մատակարարման շղթայի ամբողջականությունը և որակի կառավարման հետ կապված խնդիրները: Ինքնուրույն աշխատանք՝ իրավիճակային խնդիրների ներկայացում, քննարկում: Գործնական հարցերի և առաջադրանքների վերլուծություն</p>
Օր 3	
2 ժամ	<p>Դասախոսություն</p> <p>Ներածություն՝ դեղերի հայտնաբերման և ստեղծման ուղիները, կլինիկական փորձարկումներ: Կլինիկական փորձարկումների փուլերը, կանոնները, դեղերի հետաշուկայական հետազոտություններ, դեղագոյնություն</p>
1 ժամ	<p>Գործնական աշխատանք</p> <p>Թեմային առնչվող դեպքերի ներկայացում և քննարկում. Ինքնուրույն աշխատանք՝ իրավիճակային խնդիրների ներկայացում, քննարկում: Գործնական հարցերի և առաջադրանքների վերլուծություն</p>
Օր 4	
2 ժամ	<p>Դասախոսություն</p> <p>Զնափոխված ձեռքագատմամբ պերորալ դեղաձևեր.</p>

	<ul style="list-style-type: none"> • Ձևափոխված ձերբագատմամբ /22/ պերորալ դոզավորված դեղաձևերի ներկայիս առկա տեսակները, դրանց կառուցվածքի և ազդեցության դրսևորման հետ կապված խնդիրները: • 22 կիրառման առանձնահատկությունները՝ առավելությունները և թերությունները: • Ձևափոխված ձերբագատման տեսակները՝ դանդաղ, երկարաձգված և բերանի խոռոչում տարրանջատվող ձևափոխված ձերբագատմամբ պերորալ դոզավորված դեղաձևի բնութագիրները: • Դանդաղ ձերբագատմամբ, կրկնակի գործողության, երկարաձգված, հաստատուն, երկարացված, հսկվող դեղի ձերբագատման առանձնահատկությունների վերլուծությունը. • Ձևափոխված ձերբագատման առանձնահատկությունները. • Ձևափոխված ձերբագատմամբ պերորալ դոզավորված դեղաձևերի բաղադրակազմը և դեղի մատակարարման համակարգերը. • Մոնոլիտիկ մատրիցային, պահեստային կամ թաղանթային հսկմամբ, օսմոտիկ ձերբագատմամբ դոզավորված դեղաձևերի մատակարարող համակարգերի բաղադրակազմը, դրանց առավելությունները և թերությունները, կիրառման առանձնահատկությունները և հեռանկարները
1 ժամ	<p>Գործնական աշխատանք</p> <p>Թեմային առնչվող դեպքերի ներկայացում և քննարկում. Ինքնուրույն աշխատանք՝ իրավիճակային խնդիրների ներկայացում, քննարկում: Գործնական հարցերի և առաջադրանքների վերլուծություն</p>
Օր 5	
2 ժամ	<p>Դասախոսություն</p> <p>Դեղերի կայունություն, կայունության թեստավորման եղանակները և միջազգային ուղեցույցների պահանջները.</p> <ul style="list-style-type: none"> • Պատրաստի դեղերի կայունությունը դեղարտադրանքի կայունության հասկացությունը • Դեղերի կայունության տեսակները, • Տարբեր գործոնների ազդեցությանը բնորոշումը դեղերի կայունության վրա, • Անկայունության դրսևորումները և դրանց հետևանքները, ազդեցությունը դեղերի որակի ցուցանիշների վրա, • Դեղերի կայունության վերաբերյալ գործող միջազգային պահանջներին և իրականացվող հետազոտություններին, • Պիտանիության ժամկետ հասկացությունը և դրա գնահատման ժամանակակից մոտեցումները
1 ժամ	<p>Գործնական աշխատանք</p> <p>Թեմային առնչվող դեպքերի ներկայացում և քննարկում, մասնավորապես ներկայացվում են կայունության հետազոտության եղանակները, դրանց առանձնահատկությունները, վերլուծությունները այդ թվում նաև օգտագործվող սարքավորումները: Ինքնուրույն աշխատանք՝ իրավիճակային խնդիրների ներկայացում, քննարկում: Գործնական հարցերի և առաջադրանքների վերլուծություն</p>

Թիրախային լսարան՝ դեղագետներ, որակավորված մասնագետներ:

Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 20 հոգի:

Դասընթացավարներ՝ Լուսինե Ժամհարյան: